Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
ապրիլի 28-ի նիստի N 16
արձանագրային որոշման

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(2015 թվական)**

Պետական գույքի կառավարման 2015-2017 թվականների ծրագրի կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ հաշվետվություն) ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 16-ի N 411-Ն որոշման /այսուհետ՝ Ծրագիր/ հավելվածի 24-րդ կետի համաձայն:

Հաշվետվությունն ընդգրկում է 2015թ. օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան):

Հաշվետվությունը ներկայացվում է որպես հաշվետու ժամանակաշրջանում պետական գույքի կառավարման ոլորտում իրականացված միջոցառումների և գործարքների ամփոփում:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված միջոցառումներն ուղղված են եղել ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը:

2015 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում շարունակվել են պետական գույքի կառավարման ոլորտում մեթոդական բնույթի օրենսդրական փոփոխությունները, որոնց հիմնական նպատակն է կանոնակարգել և հստակեցնել պետական գույքի կառավարման գործառույթները: Մասնավորապես, ընդունվել է՝

1. ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 7-ի N 515-Ն որոշումը, որով առաջին անգամ կանոնակարգվել է պետությանը պատկանող բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման հանձնելու գործընթացը: Հիսուն և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման հանձնելու միջոցով հնարավոր է ընդլայնել պետության և մասնավոր ընկերությունների գործընկերության պրակտիկան, որը թույլ է տալիս մասնավորին չփոխանցելով բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը, ներգրավել լավագույն մասնավոր կառավարիչներին:

2. ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 800-Ն որոշումը: Որոշման ընդունմամբ հստակեցվել են մասնավորեցվող կամ օտարվող պետական գույքի շուկայական մեթոդով գնահատման գործընթացում կիրառվող ժամկետները (դրանք երկարաձգվել են): Ամրագրվել է, որ օտարման ենթակա գույքի գնահատումը ևս (մասնավորեցվող գույքի նկատմամբ կիրառվող մոտեցմամբ) իրականացվելու է ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209 որոշմամբ սահմանված կարգով:

3. ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1032-Ն որոշումը: Այս որոշմամբ կանոնակարգվել է պետական անշարժ գույքի վերանորոգման և ապամոնտաժման արդյունքում պիտանի հանդիսացող գույքի օտարման գործընթացը:

4. ՀՀ վարչապետի 2015 թվականի փետրվարի 11-ի N 91-Ա որոշումը, որով սահմանվել է պետական գույքի մասնավորեցման (մասնավորեցման նախապատրաստման) կամ ընկերությունները լուծարման ներկայացնելու աշխատանքների կատարման ժամանակացույցը 2015 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

5. ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N1517-Ն որոշումը: Որոշմամբ սահմանվել է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունքների ամփոփման և առաջարկությունների ներկայացման կարգը: Կարգով սահմանվում է նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական դիտարկումների (մոնիտորինգ) իրականացման արդյունքների և դրանից բխող վերլուծությունների հիման վրա առաջարկությունների ներկայացման հետ կապված ընթացակարգը:

6. ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի հուլիսի 30-ին ընդունվել է N875-Ն որոշումը: Որոշմամբ կանոնակարգվել է պետական գույքի հաշվառման գրանցամատյանում առկա տեղեկատվության տրամադրման կարգը, սահմանվել են տեղեկատվություն ստանալու իրավասություն ունեցող անձինք (մարմինները), նկարագրվել է տեղեկատվության տրամադրման ընթացակարգը, առանձնահատկությունները, ինչպես նաև հաստատվել են տեղեկանքների ձևերը:

7. ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի նոյեմբերի 26-ին ընդունվել է N 1402-Ն որոշումը:Որոշման ընդունման արդյունքում կանոնակարգվել են պետական սեփականություն հանդիսացող ծառայողական բնակարանների տրամադրման հետ կապված հարաբերությունները, նախանշվել են բնակարաններից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, սահմանվել է ծառայողական բնակարանների տրամադրման ընթացակարգը:

8. ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի դեկտեմբերի 24-ին ընդունվել է N 1515-Ն որոշումը: Որոշման ընդունմամբ կանոնակարգվել է անհատույց տրամադրված պետական գույքի ընդհանուր օգտագործման տարածքների սպասարկման գործընթացը:

## ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

1. Պետական ոչ առևտրային կազմակերպությունների և պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների կառավարման համակարգի կատարելագործման, դրանց կողմից պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման համար ծրագրով նախատեսվել էր հստակեցնել դրանց կազմն ու կառուցվածքը և օպտիմալացնել դրանց քանակը:

2. Ծրագրի N 1՝ <<Մասնավորեցման ծրագրում չընդգրկված՝ լուծարման առաջարկվող պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների>> ցանկում ընդգրկված՝

1) <<Ինֆորմատիկայի կենտրոն>> ՀՊ-ինֆո>> ՓԲԸ-ի լուծարման մասին ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 1307-Ա որոշումը.

2) <<Մարտունու գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան>> ՊՓԲԸ-ի և <<Մխչյանի գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան>> ՊՓԲԸ-ի լուծարման մասին ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի թիվ 986-Ա որոշումը.

3. Ծրագրի N2՝ <<Վերակազմակերպման առաջարկվող՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների>> ցանկով 2015 թվականի համար միջոցառումներ չեն նախատեսվել:

4. Ծրագրի N3՝ <<Առևտրային կազմակերպությունների կողմից վճարված և կանխատեսվող շահութաբաժինների>> ցանկում ընդգրկված առևտրային կազմակերպությունների կողմից 2014 և 2015 թվականներին ՀՀ պետական բյուջեի <<Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ>> գանձապետական հաշիվներին փաստացի փոխանցած շահութաբաժինների մասին տեղեկատվությունը ներկայացված է ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

| NN ը/կ | Առևտրային կազմակերպության անվանումը | Գտնվելու վայրը | 2014թ. ՀՀ պետական բյուջե առևտրային կազմակերպությունների «Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ» գանձապետական հաշիվներին փաստացի փոխանցած շահութաբաժինների մեծությունը (հազ. դրամ) | 2015թ. ՀՀ պետական բյուջե առևտրային կազմակերպությունների «Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ» գանձապետական հաշիվներին փաստացի փոխանցած շահութաբաժինների մեծությունը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ** | | | | |
| 1. | «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ | քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառա-վարական տուն 1 | 0.0 | 9779.9 |
| **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն** | | | | |
| 2. | «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ | քաղ. Երևան, Տիգրան Մեծի 4 | 2 371 .0 | 2325.4 |
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն** | | | | |
| 3. | «Էկոնոմիկա» հանդես» ՓԲԸ | քաղ. Երևան, Արշակունյաց 2ա | 0.0 | 0.0 |
| **Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն** | | | | |
| 4. | «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ | քաղ. Երևան, Կոմիտասի 49/4 | 15 410.0 | 19 518.8 |
| 5. | «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ | քաղ.Երևան, Կոմիտասի 49/4 | 1 500.0 | 1 980 |
| 6. | «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ | քաղ.Երևան, Արշակունյաց 12 | 0.0 | 0.0 |
| 7. | «Կոմետա» ԲԲԸ | քաղ. Երևան, Աբելյան 6 | 0.0 | 0.0 |
| **Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն** | | | | |
| 8. | «Հուշարձանների վերականգնման կենտրոն» ՓԲԸ | քաղ. Երևան, Թաիրովի 9 | 500 | 1 221.9 |
| **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն** | | | | |
| 9. | «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ՓԲԸ | քաղ.Երևան, Ա.Ահարոնյան 3 | 780.0 | 0.0 |
| **Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն** | | | | |
| 10. | «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ | քաղ. Երևան, Մյասնիկյան 5/1 | 6 500.0 | 6 460.0 |
| 11. | «Հայատոմ» ՓԲԸ | քաղ. Երևան, Ծովակալ Իսակովի 50 | 6 070.0 | 9833.0 |
| 12. | «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ | քաղ. Երևան, Աբովյան 27 | 1 682.0 | 1 695.0 |
| 13. | «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ | քաղ. Երևան, Աբովյան 27 | 5 292.0 | 5 984.5 |
| 14. | «Էներգակարգաբերում» ՓԲԸ | քաղ. Երևան, Այգեձորի 67 | 1 702.5 | 2 360.5 |
| 15. | «Անալիտիկ» ՓԲԸ | քաղ.Երևան, Կոմիտասի 29 | 4 612.0 | 2537.0 |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային կարգավորման պետական կոմիտե** | | | | |
| 16. | ««Միջուկային և ռադիացիոն | քաղ. Երևան, | 3 230.5 | 4439.0 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ | Տիգրան Մեծի | | |
| | **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն** | | | |
| 17. | «Հանրապետական հոգեբու-ժական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Երևան, Նուբարաշեն 1/3 | 0.0 | 0.0 |
| 18. | «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Երևան, Նորք-Մարաշ, 9-րդ փող., 123 | 0.0 | 0.0 |
| 19. | «Հանրապետական հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ | քաղ.Աբովյան, Արզնի խճուղի, 10 | 0.0 | 0.0 |
| 20. | «Վ. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ | քաղ.Երևան, Ֆանարջյան 76 | 11 182.0 | 0.0 |
| 21. | «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձա-գիտական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Երևան, Կոմիտասի 49/4 | 43 894.4 | 21 491.0 |
| 22. | «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Երևան, Գյուրջյան 10 | 5 365.5 | 10 233.0 |
| 23. | «Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Երևան, Դավթաշեն 25 | 1 370.5 | 601.5 |
| 24. | «Հանրապետական անձավաբու-ժական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Երևան, Աճառյան 2-րդ նրբանցք, 4 | 0.0 | 0.0 |
| 25. | «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ | քաղ.Երևան, Արմենակյան 153 | 20 164.0 | 23 615.0 |
| 26. | «Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Երևան, Ֆուչիկի 32 | 2 828.0 | 105.0 |
| 27. | «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ | քաղ. Սևան | 3 519.0 | 3 008.0 |
| 28. | «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվ. Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ | քաղ.Երևան, Կոմիտասի 49/4 | 6 501.0 | 2 767.0 |
| 29. | «Պրոֆ. Ռ.Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Երևան, Հրաչյա Ներսիսյան 7 | 17 899.5 | 3 8781.5 |
| 30. | «Ակուստիկայի գիտական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Երևան, Բագրատունյաց 2-րդ նրբ., 23 | 0.0 | 0.0 |
| 31. | «Օշական մանկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ | Արագածոտնի մարզ, գ.Օշական | 0.0 | 106.4 |
| 32. | «Հատուկ պոլիկլինիկա» ՓԲԸ | քաղ. Երևան, Կոմիտասի 49/4 | 1 996.1 | 3 854.8 |
| 33. | «Առողջապահության հանդեսի խմբագրություն» ՓԲԸ | քաղ. Երևան, Թումանյան 8, Հալաբյան 46 | 41.0 | 3.0 |
| 34. | «Երևանի երկաթուղու պոլիկլինիկա»ՓԲԸ | քաղ.Երևան, Արցախի 8բ | 0.0 | 0.0 |
| 35. | «Դիլիջան» մանկական հակատուբերկուլյոզային առողջարան» ՓԲԸ | քաղ. Դիլիջան , Օրջոնիկիձեի 5-րդ նրբ., տուն 1 | 0.0 | 0.0 |
| 36. | «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն»ՓԲԸ | քաղ.Երևան, Միեր Մկրտչյան 5 | 0.0 | 0.0 |
| | **Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն** | | | |
| 37. | «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ | քաղ. Երևան, Տիգրան Մեծի 67 | 49 946.6 | 27 528.5 |
| 38. | «Կրթություն» թերթի խմբագրություն» ՊՓԲԸ | քաղ. Երևան, Տիգրան Մեծի 67 | 778.655 | 1 246.52 |
| 39. | «Գեղագիտության ազգային | քաղ. Երևան, Աբովյան 13 | | 7 513.0 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | կենտրոն» ՊՓԲԸ | | 5 043.750 | |
| 40. | «Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» կրթահամալիր» ՓԲԸ | քաղ.Երևան, Նոր Նորքի 5 | 0.0 | 0.0 |
| 41. | «Երևանի պլաստպոլիմեր ԳՀԻ» ՓԲԸ | քաղ.Երևան, Արշակունյաց 127 | 0.0 | 0.0 |
| **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն** | | | | |
| 42. | «Արագածոտնի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ | ՀՀ Արագածոտնի մարզ, քաղ. Աշտարակ, Վարդգես Պետրոսյան 4 | 160.5 | 65.0 |
| 43. | «Արարատի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ | ՀՀ Արարատի մարզ, քաղ. Արարատ. Շահումյան 34 | 77.0 | 65.0 |
| 44. | «Արմավիրի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ | ՀՀ Արմավիրի մարզ, քաղ. Արմավիր, Աբովյան 71 | 129.5 | 64.0 |
| 45. | «Գեղարքունիքի գյուղատնտե-սության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Սայադյան 13 | 144.0 | 200.0 |
| 46. | «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Երևան, Մամիկոնյանց 39 ա | 43.0 | 5.6 |
| 47. | «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ | ՀՀ Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Սելեկցիոն կայան 3113 | 14 667.3 | 4 000.0 |
| 48. | «Կոտայքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ | ՀՀ Կոտայքի մարզ, Աբովյանի տ/2 գ. Նոր գյուղ, 1-ին փող., 4 | 197.2 | 111.0 |
| 49. | «Լոռու գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ | ՀՀ Լոռու մարզ, քաղ. Սպիտակ, Շահումյան 7 | 96.5 | 46.5 |
| 50. | «Մխչյանի գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ | ՀՀ Արարատի մարզ, գ. Մխչյան | 49.9 | 26.0 |
| 51. | «Շիրակի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ | ՀՀ Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Գյումրու խճուղի, 42 | 86.68 | 129.9 |
| 52. | «Սյունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ | ՀՀ Սյունիքի մարզ, քաղ. Գորիս, Մաշտոցի 3 | 128.25 | 182.0 |
| 53. | «Վայոց ձորի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ | ՀՀ Վայոց ձորի մարզ, քաղ. Եղեգնաձոր, Շահումյան 5 | 114.5 | 79.5 |
| 54. | «Տավուշի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ | ՀՀ Տավուշի մարզ, քաղ. Իջևան, Մելիքբեկյան 5/12 | 181.0 | 131.5 |
| 55. | «Ագրոսպասարկում» ՓԲԸ | քաղ. Երևան, Տիգրան Մեծի 65 ա | 0.0 | 0.0 |
| 56. | «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ | քաղ. Երևան, Վարդանանց փակուղի, 8Ա | 0.0 | 0.0 |
| 57. | «Սևան-Հրազդան-ջրառ» ՓԲԸ | քաղ.Երևան, Արմենակյան 125 | 0.0 | 0.0 |
| 58. | «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ | քաղ.Արմավիր, Երևանյան 30 | 0.0 | 0.0 |
| 59. | «Մելիորացիա» ՓԲԸ | Արարատի մարզ, գ. Հայանիստ | 0.0 | 0.0 |
| 60. | «Նոր-Ակունք» ՓԲԸ | քաղ. Արմավիր, | 0.0 | 0.0 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | | Մաշտոցի 59 | | |
| 61. | «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Դուդկոյի 1 | 0.0 | 0.0 |
| 62. | «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ | քաղ. Վանաձոր, Ն. Ստեփանյան 2 | 0.0 | 0.0 |
| **Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն** | | | | |
| 63. | «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲԸ | Զվարթնոց 2 օդանավակայան | 49 642.1 | 1 035.3 |
| **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն** | | | | |
| 64. | «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ | քաղ. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | 23 979.0 | 18 765.0 |
| 65. | «Հատուկ կապ» ՓԲԸ | քաղ. Երևան, Թումանյան 23 | 298.0 | 0 |
| 66. | «Վարչատնտեսական» ՓԲԸ | քաղ.Երևան, Նալբանդյան 28 | 2 621.345 | 420 |
| 67. | «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ | քաղ. Երևան, Նալբանդյան 28, քաղ. Երևան, Միեր Մկրտչյան 5բ | 0.0 | 0.0 |
| 68. | «Հայփոստ» ՓԲԸ | քաղ. Երևան, Սարյան 22 | 0.0 | 0.0 |
| 69. | «Արմկոսմոս» ՓԲԸ | քաղ. Երևան, Նալբանդյան 28 | 0.0 | 0.0 |
| **Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** | | | | |
| 70. | «Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» ՓԲԸ | Կոտայքի մարզ, քաղ. Ծաղկաձոր | 0.0 | 0.0 |
| 71. | «Դավիթ Համբարձումյանի անվան ջրացատկի հերթափոխի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՓԲԸ | քաղ. Երևան, Մովսես Խորենացու 1-ին նրբ., թիվ 1 | 0.0 | 0.0 |
| 72. | «Հավաքական թիմերի մարզական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի, 4 | 0.0 | 0.0 |
| **Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** | | | | |
| 73. | «Նորք» տեղեկատվավեր-լուծական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Երևան, Կ.Ուլնեցու 68 | 8 872.7 | 4 206.75 |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն** | | | | |
| 74. | «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | քաղ. Երևան, «Զվարթնոց» օդ/կ, Իսահակ Գասպարյան պող., 33 | 148 007.4 | 245 127.8 |
| 75. | «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Երևան, «Զվարթնոց» օդ/կ | 187.5 | 513.0 |
| 76. | «Ավիաբուժ» բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Երևան, «Զվարթնոց» օդ/կ | 0.0 | 88.8 |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն** | | | | |
| 77. | «02 շաբաթաթերթ» ՓԲԸ | քաղ. Երևան, Նալբանդյան 130 | 863.5 | 1157.0 |
| 78. | «Կոնտինենտտեքս» ՓԲԸ | քաղ. Երևան, Կոմիտասի 15 | 0.0 | 0.0 |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն** | | | | |
| 79. | «Երևանի ջրամատակարարման ուղեմաս» ԲԲԸ | քաղ. Երևան, Արցախի 40 | 1 753.0 | 500.0 |
| 80. | «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ | քաղ. Երևան, Օրբելու 41 | 1 848,0 | 2457.5 |
| 81. | «Մասիսի նավթամթերքներ» ՓԲԸ (պետական բաժնեմասը 100%) | Արարատի մարզ, Մասիսի կայարան | 0.0 | 0.0 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 82. | «Արթիկի նավթամթերքներ» ՓԲԸ (պետական բաժնեմասը 100%) | քաղ. Արթիկ, Տոփագործների 24 | 0.0 | 0.0 |
| 83. | «Երաոսպասարկում» ՓԲԸ (պետական բաժնեմասը 100%) | քաղ. Երևան, Մովսես Խորենացու 26ա | 0.0 | 0.0 |
| 84. | «Վայոցձորաոսպաս» ՓԲԸ (պետական բաժնեմասը 100%) | քաղ. Եղեգնաձոր, Պարույր Սևակի 9 | 0.0 | 0.0 |
| 85. | «Արաքս» ՓԲԸ (պետական բաժնեմասը 80%) | քաղ. Երևան, Գ.Նժդեհի 37 | 0.0 | 0.0 |
| 86. | «Ջրհան» ՓԲԸ (պետական բաժնեմասը 100%) | Արմավիրի մարզ, գ. Գեղակերտ | 0.0 | 0.0 |
| 87. | «Հայաշինվերանորոգում-1» ՓԲԸ (պետական բաժնեմասը 80%) | քաղ. Երևան, Գլինկայի 7 | 0.0 | 0.0 |
| 88. | «Ընդերքաբան» ԲԲԸ (պետական բաժնեմասը 100%) | Կոտայքի մարզ, քաղ. Բյուրեղավան | 0.0 | 0.0 |
| 89. | «Հատուկպայթշին» ԲԲԸ (պետական բաժնեմասը 63.15%) | քաղ. Երևան | 0.0 | 1 600.0 |
| 90. | «Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ (պետական բաժնեմասը 100%) | քաղ. Երևան, Հրազդանի կիրճ 4 | 0.0 | 217.5 |
| 91. | «Ձիասպորտի կենտրոն» ՓԲԸ (պետական բաժնեմասը 100%) | քաղ. Երևան, Շիրակի 39 | 0.0 | 0.0 |
| 92. | «Կապուտակ» ՓԲԸ (պետական բաժնեմասը 100%) | քաղ. Երևան | 0.0 | 0.0 |
| **Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն** | | | | |
| 93. | «Հատուկ լեռնափրկարար ծառայություն» ՓԲԸ | քաղ.Երևան, Գյուլբենկյան 29, շին. 25 | 240.0 | 104.0 |
| 94. | «Տեղեկատվական ապահովման և ազդարարման կենտրոն» ՓԲԸ | քաղ.Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող., 109/8 | 0.0 | 437.4 |
| **Երևանի քաղաքապետարան** | | | | |
| 95. | «Կ.Դեմիրճյանի անվ. Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | քաղ.Երևան, Մարշալ Բաղրամյան 78 | 0.0 | 0.0 |
| **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան** | | | | |
| 96. | «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Կապան, Մ. Ստեփանյանի 13 | 828.0 | 1163 |
| 97. | «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Քաջարան, Բակունցի 1 | 520.0 | 349.0 |
| 98. | «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Գորիս, Տաթևացու 31 | 4 012.0 | 440.0 |
| 99. | «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Մեղրի, Մելիք-Օհանջանյան 3 | 0.0 | 256.2 |
| 100. | «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Սիսիան, Չարենցի 14 | 560.5 | 580.7 |
| 101. | «Սյունիքի մարզային նյարդահոգեբու-ժական դիսպանսեր» ՓԲԸ | քաղ. Կապան, Բաղաբերդ 48 | 14.0 | 62.0 |
| 102. | «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ | քաղ.Գորիս, Օրբելու 5 | 67.0 | 73.0 |
| **Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան** | | | | |
| 103. | «Գավառի ԲԿ» ՓԲԸ | քաղ. Գավառ, Ազատության 21 | 1 000.0 | 2 985.1 |
| 104. | «Գավառի պոլիկլինիկա» ՓԲԸ | քաղ. Գավառ, Շահումյան 14 | 1 197.5 | 2 441.0 |
| 105. | «Ճամբարակի ԱԿ» ՓԲԸ | քաղ.. Ճամբարակ, Տիգրան Մեծ փող. | 1 407.0 | 4 669.5 |
| 106. | «Մարտունու ԲԿ» ՓԲԸ | քաղ.. Մարտունի, Գետափնյա փող. | 1 045.0 | 1 239.0 |
| 107. | «Մարտունու ծննդատուն» ՓԲԸ | քաղ.. Մարտունի, Գետափնյա փ.ող. 1 | 520.0 | 1 157 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 108. | «Սևանի հիվանդանոց» ՓԲԸ | քաղ. Սևան, Լճափնյա փող. | 1 973.3 | 3 167.9 |
| 109. | «Սևանի պոլիկլինիկա» ՓԲԸ | քաղ.Սևան, Նաիրյան 169 | 1 968.6 | 310 |
| 110. | «Վարդենիսի պոլիկլինիկա» ՓԲԸ | քաղ.Վարդենիս Լեռնագործների 14 | 67.5 | 27.7 |
| **Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարան** | | | | |
| 111. | «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ | քաղ.Վայք | 465.0 | 0 |
| 112. | «Ջերմուկ առողջության կենտրոն» ՓԲԸ | քաղ.Ջերմուկ | 29.0 | 94. 5 |
| 113. | «Եղեգնաձորի բուժական միավորում» ՓԲԸ | քաղ.Եղեգնաձոր | 0.0 | 0.0 |
| 114. | «Եղեգնաձորի ատամնապրո-տեզարան» | քաղ.Եղեգնաձոր | 0.0 | 0.0 |
| **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան** | | | | |
| 115. | «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3 | 0.0 | 0 |
| 116. | «Ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Շիրակացու 21 | 1 922.5 | 667.50 |
| 117. | «Գյումրու «Սամարիթեր վերականգնողական» հիվանդանոց ՓԲԸ | քաղ. Գյումրի, Մանուշյան 9 | 0.0 | 0.0 |
| 118. | «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Կոշտոյան 3 | 0.0 | 1.0 |
| 119. | «Գյումրու մոր ու մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Գ.Նժդեհի 5 | 164.0 | 1 683 |
| 120. | «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Վ.Սարգսյան 25ա | 159.5 | 389.2 |
| 121. | «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Ղարսի խճուղի 2ա | 68.0 | 120 |
| 122. | «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Շիրակացի 201 | 174.0 | 492 |
| 123. | «Գյումրու Ն.Ա.Մելիքյանի անվ. թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Մազմանյան 3 | 2 747.0 | 1235.0 |
| 124. | «Գյումրու Վ. Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Սարոյանյան 1 | 48.0 | 101.0 |
| 125. | Գյումրու «Էնրիկո Մատտեի» անվան պոլիկլինիկա» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Շիրակացու 115 | 483.0 | 186.0 |
| 126. | Գյումրու «Միջազգային կարմիր խաչի» անվան պոլիկլինիկա» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Անի թաղամաս 5 փող. 8 շենք | 292.0 | 629.05 |
| 127. | «Բեռլին» պոլիկլինիկա» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Հաղթանակի 25 | 357.5 | 134.5 |
| 128. | «Գյումրու շտապ բուժօգնության կայան» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Մազմանյան 3 | 110.5 | 145.0 |
| 129. | «Արյան փոխներարկման կայան» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Մազմանյան 3 | 282.1 | 240.0 |
| 130. | «Գյումրու պաթոլոգո-անատոմիական լաբորատորիա» ՓԲԸ | քաղ. Գյումրի, Շիրակացի 79 | 140.0 | 567.4 |
| 131. | «Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | գ. Ախուրյան, Ախուրյանի խճ. 14 | 40.5 | 129.2 |
| 132. | «Մարալիկի առողջության կենտրոն» ՓԲԸ | քաղ. Մարալիկ, Շահինյան 7 | 39.1 | 88.6 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 133. | «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Արթիկ, Բաղրամյան 2 | 265.6 | 508.0 |
| 134. | Արթիկի «Մոր և մանկան առողջության կենտրոն» ՓԲԸ | քաղ. Արթիկ, Բաղրամյան 1 | 85.7 | 617.5 |
| 135. | «Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ | գ. Ամասիա | 76.0 | 209.6 |
| **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան** | | | | |
| 136. | «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Արտաշատ | 4 272.5 | 4501.0 |
| 137. | «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Մասիս | 0.0 | 18785 |
| 138. | «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Վեդի | 0.0 | 0.0 |
| 139. | «ՈԿՖ Բանավանի ԱԱՊԿ» | գ. Բանավան | 15 200.0 | 0.0 |
| 140. | «Վեդու ծննդատուն» ՓԲԸ | քաղ. Վեդի | 2 791.0 | 120.0 |
| 141. | «Արարատի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Արարատ | 2 493.0 | 25.7 |
| 142. | «Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ | քաղ. Արմաշ | 1 034.5 | 667.6 |
| **Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան** | | | | |
| 143. | «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Հրազդան, Միկրոշրջան | 3 173.9 | 8583.85 |
| 144. | «Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Աբովյան, Հատիսի 6 | 7 386.0 | 21744.8 |
| 145. | «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ | քաղ. Աբովյան, Հատիսի 22 | 1 152.8 | 1505.1 |
| 146. | «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՊՓԲԸ | քաղ. Չարենցավան, Իսահակյան 3 | 2 134.0 | 5412.0 |
| 147. | «Նաիրիի բժշկական կենտրոն» ՊՓԲԸ | քաղ. Եղվարդ, Չարենցի 196 | 470.0 | 506.5 |
| 148. | «Նոր Հաճնի պոլիկլինիկա» ՊՓԲԸ | քաղ. Նոր Հաճն, Տոռոզյան 4 | 171.8 | 323.1 |
| 149. | «Ծաղկաձորի բուժամբուլատորիա» ՊՓԲԸ | քաղ. Ծաղկաձոր | 14.7 | 6.7 |
| 150. | «Հրազդանի մարզային արյան բանկ» ՊՓԲԸ | քաղ. Հրազդան, Ղուկասյան 40 | 65.0 | 315.0 |
| **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան** | | | | |
| 151. | «Արմավիրի արյան փոխներարկման կայան» ՓԲԸ | քաղ. Արմավիր, Մխիթար Հերացու 10 | 0.0 | 25.5 |
| 152. | «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Արմավիր, Շահումյան 3 | 2 143.0 | 2643.0 |
| 153. | «Քեվօրք և Անիթա Փակումեանների հիշտակի «Հիսուսի մանուկներ» առողջության կենտրոն» ՓԲԸ | գ. Մյասնիկյան | 62.7 | 0.0 |
| 154. | «Վաղարշապատի ծննդատուն» ՊՓԲԸ | քաղ. Էջմիածին, Սպանդարյան-0 | 0.0 | 0.0 |
| 155. | «Վաղարշապատի Հիվանդանոց» ՊՓԲԸ | քաղ.Էջմիածին, Սպանդարյան-1 | 0.0 | 0.0 |
| 156. | «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ | քաղ.Էջմիածին, Բաղրամյան-26 | 2 226.9 | 1766.0 |
| 157. | «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Մեծամոր | 1 010.0 | 92.3 |
| **Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան** | | | | |
| 158. | «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Վանաձոր, Բանակի 8ա | 9 040.0 | 5000.0 |
| 159. | «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ | քաղ. Վանաձոր, Պ. Սևակի 51 | 57.4 | 25.6 |
| 160. | «Լոռու մարզային հոգենյարդա- | քաղ. Վանաձոր, Նժդեհի | 130.8 | 150.5 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | բանական դիսպանսեր» ՊՓԲԸ | 57 | | |
| 161. | «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ | քաղ. Վանաձոր, Մյասնիկյան 17 | 618.3 | 887.7 |
| 162. | «Գուգարքի կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ | քաղ. Վանաձոր, Բաթումի 13 | 57.7 | 326.6 |
| 163. | «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ | քաղ. Վանաձոր, Պ. Սևակի 51 | 134.0 | 278.7 |
| 164. | «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» ՊՓԲԸ | քաղ. Վանաձոր, Ամիրյան 10 | 0.0 | 0.0 |
| 165. | «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ | քաղ. Վանաձոր, Տարոն-2 ՔՇՀ-4 | 266.8 | 800 |
| 166. | «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ | քաղ. Վանաձոր, Բանակի 8 ա | 3.5 | 13.3 |
| 167. | «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Սպիտակ, Նորվեգական թաղամաս | 0.0 | 0.0 |
| 168. | «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ | քաղ. Ստեփանավան, Ս. Վարդանի 1 | 668.2 | 0.1 |
| 169. | «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Ախթալա» Գնունու 4 | 1 000.0 | 1396.9 |
| 170. | «Ախթալայի ԲԱ» ՊՓԲԸ | քաղ. Թումանյան | 0.0 | 0.0 |
| 171. | «Դսեղի առողջության կենտրոն» ՊՓԲԸ | քաղ. Տաշիր, Գրիբոյեդովի 3 | 35.9 | 0.1 |
| 172. | «Թումանյանի ԲԱ» ՊՓԲԸ | քաղ. Ալավերդի, Սայաթ-Նովա 20 | 0.0 | 0.0 |
| **Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան** | | | | |
| 173. | «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Ապարան, Գարեգին Նժդեհի 30 | 1 957.0 | 1530.0 |
| 174. | «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ.Թալին, Քոթանյան 1 | 1 600.0 | 4351.6 |
| **Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարան** | | | | |
| 175. | «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Բերդ, Ա. Մանուկյան 25 | 1082.0 | 3217.00 |
| 176. | «Իջևանի ԱԱՊԿ» ՓԲԸ | քաղ. Իջևան, Երիտասարդական 2 ա | 283.3 | 322.7 |
| 177. | «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Իջևան | 0.0 | 0.0 |
| 178. | «Դիլիջանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Դիլիջան | 0.0 | 0.0 |
| 179. | «Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | քաղ. Նոյեմբերյան | 0.0 | 0.0 |
| 180. | «Բագրատաշենի ԱԱՊԿ» ՓԲԸ | գ. Բագրատաշեն | 0.0 | 83.5 |

5. Ծրագրի N4՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմին հանձնվող՝ չօգտագործվող կամ ըստ նպատակային նշանակության չօգտագործվող կամ մասնակիորեն օգտագործվող պետական գույքի>> ցանկում ընդգրկված՝ ՀՀ Արարատի մարզ, Նորամարգ համայնք, Ազատության փող., 1 հասցեում գտնվող անշարժ գույքը օտարվել է ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի N671-Ն որոշման համաձայն:

6. Ծրագրի N5՝ <<Մասնավորեցման ծրագրում ընդգրկված՝ չմասնավորեցված /չլուծարված/ առևտրային կազմակերպությունների և այլ օբյեկտների մասնավորեցման և /կամ/ լուծարման առաջարկելու ժամկետների>> ցանկում ընդգրկված՝

1) Տաշիրի կինոցանցի գույքի մասնավորեցման նպատակով մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը.

2) <<Վարդենիսի ստոմատոլոգիական պոլիկլինիկա>> ՓԲԸ-ն առաջարկվում է հանել ցանկից, քանի որ այն ընդգրկված չէ մասնավորեցման ծրագրում /ընկերությունը մասնավորեցման ծրագրում ընդգրկելու մասին օրենքի նախագիծը գտնվում է ՀՀ Ազգային Ժողովում/.
3) <<Արթիկի նավթամթերքներ>> ՓԲԸ-ի մասնավորեցման մասին ընդունվել է ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի N90-Ա որոշումը.
4) <<Երաոսպասարկում>> ՓԲԸ-ի մասնավորեցման նպատակով ներկայացվել է գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալների փաթեթ.
5) <<Վայոցձորառսպաս>> ՓԲԸ-ի մասնավորեցման նպատակով մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը.
6) <<Ընդերքաբան>> ԲԲԸ-ի առանձնացման ձևով վերակազմակերպելու /ստեղծելով նոր ընկերություններ և ընկերությունների պետական գրանցումն իրականացնելուց հետո, մասնավորեցման ներկայացնելու/ վերաբերյալ՝ ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N1547-Ա որոշումը.

7. Ծրագրի N6՝.<<Մասնավորեցման ծրագրում չընդգրկված, օտարման առաջարկվող անշարժ գույքի և անշարժ գույքի, որի՝ պետությանը պատկանող գույքային իրավունքներն առաջարկվում է փոխանցել իրավաբանական ու ֆիզիկական անձանց>> ցանկում ընդգրկված՝

1) 26-րդ կետում նշված՝ <<Շիրակի մարզային հիվանդանոց>> ՓԲԸ-ից առանձնացված՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան 51/11 հասցեում գտնվող գույքի օտարման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի N84-Ա որոշումը:

2) 32-րդ կետում նշված <<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից առանձնացված գույքը համայնքին հանձնելու նպատակով (ք.Մեղրի, Մ. Օհանջանյան 92/1 հասցեում գտնվող՝ 461.1 քառ. մետր մակերեսով ինֆեկցիոն մասնաշենք) մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի հունիսի 18-ին ընդունվել է N1328-Ա որոշումը:

3) 35-րդ կետում նշված գույքը ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N1285-Ա որոշման համաձայն ներկայացված է օտարման՝ մրցույթով:

4) 36-րդ կետում նշված՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճ. 129/10 հասցեում գտնվող գույքը ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N1332-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման:

5) 38-րդ կետում նշված՝ ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտ համայնքում գտնվող գույքը ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N1392-Ա որոշմամբ օտարվել է.

6) ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 16-ի N401-Ա որոշմամբ 8 անվանում անշարժ գույքը ներկայացվել է օտարման, որից N6 ցանկի 37-րդ, 40-րդ և 43-րդ կետերում նշված գույքը օտարվել է, իսկ նշված որոշմամբ չօտարված՝ 34-րդ, 39-րդ, 42-րդ, 45-րդ և 46-րդ կետերում նշված գույքը կրկին գնահատվել է, մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի N111-Ա որոշումը:

7) 47-50-րդ կետերում նշված գույքն առաջարկվում է հանել ցանկից, քանի որ այն սեփականության իրավունքով պատկանում է <<Հայաէրոնավիգացիա>> փակ բաժնետիրական ընկերությանը: Մինչդեռ ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 882-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ օտարման ենթակա է պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրացված գույքը: